ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ՄՊ/112-2020

„06„07 2020թ.

ք.Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ՈՒ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 117 ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 92 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «զ» կետի պահանջներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 29.07.2004թ. № 1064-Ն որոշման՝ մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգ ստեղծելու նպատակով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարզում ստեղծել ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Արարատի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, մանրէաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3.Արարատի մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, մանրէաբանական արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ցանկը՝ համաձայն հավելված 3-ի:

4. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ ԱԻՆ ՓԾ Արարատի մարզային փրկարարական վարչության պետին:

5. ՈՒԺը կորցրած ճանաչել ՀՀ Արարատի մարզպետի 2014 թվականի հոկտեմբերի 30-ի՝ << Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի տարածքում ճառագայթային, քիմիական, ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգ ստեղծելու մասին>> թիվ 117 և 2013 թվականի սեպտեմբերի 25-ի՝ <<Արարատի մարզի ճառագայթային, քիմիական , մանրէաբանական մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին>> թիվ 92 որոշումները:

Recoverable Signature

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: SARGSYAN GARIK 2811870695 Գ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Արարատի մարզպետի

2020թ. հոկտեմբեր «06-ի»

թիվ 2ՊՄ/112-2020 հրամանի

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ՈՒ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Համակարգը հանդիսանում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխման ու դրանց հետևանքների վերացման միջոցառումների բաղկացուցիչ մասը:

2. Համակարգում ներառվում են՝

1) Հայաստանի Հանրապետության ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Արարատ» մասնաճյուղը,

2) Արարատի մարզային հիդրոմետ ծառայությունը,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արարատի մարզային կենտրոնը,

4) ՔՊ բժշկական ծառայությունը (Արտաշատի, Մասիսի, Վեդու և Արարատի բժշկական կենտրոններ),

5) «Վեոլիա ջուր արևելք» Արտաշատի, Արարատի և Մասիսի տեղամասերը /համաձայնությամբ/

6) «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Արարատի մարզային կենտրոնը:

3. Արտակարգ իրավիճակներում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի ընդհանուր ղեկավարումը իրականացնում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի մարզային կառույցը (այսուհետ՝ լիազոր մարմնի մարզային ստորաբաժանում. Արարատի մարզային փրկարարական վարչություն), իսկ համակարգի անմիջական ղեկավարումն ըստ

գործառույթների իրականացնում են համապատասխան վերադաս պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները:

4. Մարզում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության իրականացման նպատակներն են.

1) Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ իրականացնելիս շրջակա միջավայրի օբյեկտների (հողի, օդի, ջրի, բուսածածկույթի, սննդամթերքի, սննդահումքի, անասնակերի) ռադիոակտիվ, քիմիական ու մանրէաբանական աղտոտվածության ժամանակին որակական ցուցանշումը (ինդիկացիա),

2) Շրջակա միջավայրից, սննդամթերքից, սննդահումքից, անասնակերից վերցված փորձանմուշներում լաբորատոր պայմաններում անալիտիկ մեթոդներով նյութերի ու մանրէների քանակական որոշումը, ինչպես նաև լաբորատոր փորձաքննության անցկացումն ու եզրակացության տրամադրումը,

3) Մշտական հսկողության արդյունքների հիման վրա ռադիոակտիվ, քիմիական և վարակիչ հիվանդությունների հարուցիչներից բնակչության և գյուղատնտեսական պաշտպանության առաջնահերթ միջոցառումների անցկացումը:

5. Լիազոր մարմնի մարզային ստորաբաժանումն ապահովում է համակարգի մարմինների համագործակցությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և հասարակական կարգի ապահովման բնագավառներում լիազորված պետական կառավարման մարմինների մարզային կառույցների՝ արտակարգ իրավիճակներում գործող մասնագիտացված ստորաբաժանումների հետ:

6. Համակարգի մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում են 3 ռեժիմով՝

1) *Ամենօրյա աշխատակարգի ռեժիմ*---խաղաղ ժամանակ, նորմալ ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի պայմաններում մշտական հսկողությունն իրականացվում է այն խնդիրների ծավալով, որոնք սահմանվում են տվյալ հիմնարկի համար՝ վերադաս մարմնի կողմից, մշտական արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացվում է վերադաս մարմին.

2) *Բարձր պատրաստականության աշխատակարգի ռեժիմ*---ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական (համաճարակային) իրավիճակի, հիդրոօդերևութաբանական ցուցանիշների վատթարացման պայմաններում՝ օդում, ջրում,

հողում, բուսածածկույթում, սննդամթերքում, սննդահումքում, անասնակերում, ճառագայթային, քիմիական նյութերի ու մանրէների այնպիսի քանակներ հայտնաբերելու դեպքում, որոնք գերազանցում են թույլատրելի քանակների նորմատիվները, ինչպես նաև վարակիչ հիվանդությունների հարուցիչներ հանդիսացող մանրէներ հայտնաբերելու դեպքում և կենդանիների վտանգավոր վարակիչ հիվանդությունների ծագման ժամանակ տեղեկություններն անհապաղ ներկայացվում են լիազոր մարմնի մարզային ստորաբաժանում և վերադաս մարմին՝ ըստ ենթակայության: Այնուհետև պարբերաբար (յուրաքանչյուր 4 ժամը մեկ անգամ) զեկուցվում է կապի առկա միջոցներով: Տեղեկատվական փաստաթղթերի ձևերը և լրացման կարգը համակարգի յուրաքանչյուր մարմնի համար սահմանվում են վերադաս մարմնի կողմից և համաձայնեցվում լիազոր մարմնի հետ.

3) *Լիակատար պատրաստականության ռեժիմ*---շրջակա միջավայրի օբյեկտներում, սննդահումքերում և անասնակերում ճառագայթաակտիվության ֆոնային ցուցանիշների ու քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցետրացիաների գերազանցման, վարակիչ հիվանդությունների հարուցիչներ հանդիսացող մանրէների հայտնաբերման ժամանակ, մարդկանց և կենդանիների շրջանում վտանգավոր վարակիչ հիվանդություններով խմբակային հիվանդացման կամ այդ հիվանդությունների բռնկումների, շրջակա միջավայրի բարձր աղտոտվածության դեպքում անհապաղ տեղեկատվությունը հայտնել լիազոր մարմնի մարզային ստորաբաժանում և վերադաս մրամին՝ անմիջապես կամ ոչ ուշ, քան 2 ժամ անց՝ օգտագործելով համապատասխան փաստաթղթերը և կապի առկա միջոցները: Հետագա տեղեկատվությունը հաղորդվում է յուրաքանչյուր 4 ժամը մեկ անգամ կամ ավելի հաճախ՝ ըստ անհրաժեշտության:

7/6/2020

X

VERIFIED OCSP 06/07/20 17:33:02 GMT+4

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: MIRZAKHANYAN LILIT 6107860169 Լ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Հավելված 2

ՀՀ Արարատի մարզպետի

2020թ. հուլիսի «6-ի»

թիվ 112 որոշման

ԿԱՐԳ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է մարզում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակի բնագավառում տեղեկատվության հավաքագրման և փոխանցման կարգը:

2. Տեղեկատվությունը պետք է ներառի տեղեկություններ կանխատեսվող և գրանցված ճառագայթային, քիմիական, մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ:

3. Ելնելով իրավիճակից ներկայացվում է օպերատիվ և ընթացիկ տեղեկատվություն:

4. Արտակարգ իրավիճակների արձագանքման և իրավիճակի վերաբերյալ օպերատիվ տեղեկատվությունը տրվում է բոլոր շահագրգիռ կառավարման մարմիններին՝ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով:

5. Ընթացիկ տեղեկատվությունը ներառում է տեղեկություններ մարզի ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրավիճակի մասին:

6. Տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ մարզի տարածքում շրջակա միջավայրի դիտարկում և մարզում ճառագայթային, քիմիական, մանրէաբանական իրավիճակի հսկողություն իրականացնող պետական մարմինները:

7. Տեղեկատվության հավաքագրումը և փոխտեղեկատվությունը իրականացվում է պետական կառավարման մարզային մարմինների կողմից:

8. Տեղեկատվությունը ներկայացվում է վերադաս մարմիններին և Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչությանը:

9. Տեղեկատվությունը ներկայացվում է համաձայն հավելված 3-ում ներկայացված ցանկի:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 06/07/20 17:37:26 GMT+4

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: MIRZAKHANYAN LILIT 6107860169 Լ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

Հավելված 3

ՀՀ Արարատի մարզպետի

2020թ. հոկտեմբեր «06-ի»

թիվ 112-Ա հրամանի

ՑԱՆԿ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԼ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

հ/հ	Կազմակերպության անվանումը	Տեղեկատվություն	Ում է հաղորդում	Տեղեկատվության բարբերականությունը
1.	2.	3.	4.	5.
1.	ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Արարատ» մասնաճյուղը	- Կարանտինային հիվանդությունների արձանագրման և կասկածի դեպքում: - Մարդկանց և կենդանիների համար ընդհանուր ինֆեկցիաների արձագանքման դեպքում: -Այլ վարակիչ և մակաբուծային, տարափոխիկ հիվանդությունների արձանագրման դեպքում: - Այլ վարակիչ հիվանդությունների բռնկումների և թունավորումների, անհայտ ախտախտագման հիվանդությունների արձանագրման դեպքում: - Ոչ վարակիչ (սննդային, օձի խայթոցի և այլ) թունավորումների արձանագրման դեպքում: Ջրատար համակարգի վթարի և մարդկանց զանգվածային հիվանդացման (այդ թվում	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություն Արարատի մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն	Արձանագրելիս՝ անհապաղ

		սպառնալիքի դեպքում): - Խմելու ջրում սանիտարական նորմերին չհամապատասխանող արդյունքների (որոնք կարող են բերել մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացման) արձանագրման դեպքում:		
2.	ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի Արարատի մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Արարատի մարզային կենտրոնը ՀՀ կառավարության ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արարատի մարզային կենտրոնը	- Կենդանիների (ընտանի և վայրի) զանգվածային հիվանդության, անկումների արձանագրման դեպքում: - Կենդանիների (այդ թվում արտասահմանից ներմուծված) հատուկ վտանգավոր ինֆեկցիաների արձանագրման, կասկածի դեպքում: - Մարդկանց և կենդանիների ընդհանուր ինֆեկցիաների արձանագրման դեպքում: - Անհայտ և անսովոր հիվանդացման դեպքերի արձանագրման դեպքում: - կենդանիների անհայտ ախտածագման թունավորումների արձանագրման դեպքում: - Բույսերի զանգվածային հիվանդության դեպքում:	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություն ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	Արձանագրելիս՝ անհապաղ
3.	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություն	- Բնածին աղետների (երկրաշարժ, սողանք, ուժեղ քամի, անձրևային վարարումներ, հեղեղումներ) արձագանքման դեպքում: - Ճառագայթաակտիվ նյութերի արտանետմամբ վթարների և պատահարների արձանագրման դեպքում: - Տեխնածին վթարների արձանագրման դեպքում: - Քիմիական վտանգավոր նյութերի արտանետումով վթարների արձանագրման	ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն «Հանրապետական անասնաբուժասանիտարական	Արձանագրելիս՝ անհապաղ

		դեպքում: - Խմելու և ոռոգման ջրի, կոյուղու համակարգի խոշոր (մարդկանց և կենդանիների զանգվածային հիվնադացման և հեղեղումներ առաջացնելու սպառնալիք ներկայացնող) վթարների արձանագրման դեպքում: - Մարդկանց, կենդանիների զանգվածային հիվանդությունների արձանագրման դեպքում: - Անտառներին և մշակաբույսերի ցաքատարածություններին վտանգ ներկայացնող հրդեհների արձանագրման դեպքում:	և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի Արարատի մարզային կենտրոնը ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի Արարատի մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն	
4.	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ Արարատի մարզային ծառայություն	- Հիդրոօդերևութաբանական տվյալներ: - Տվյալներ շրջակա միջավայրի ճառագայթային ֆոնի վերաբերյալ:	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություն Մյուս կառույցներին ըստ անհրաժեշտության	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություն՝ օրը երկու անգամ, իսկ շեղումներ արձանագրելիս՝ անհապաղ
5.	«Վեոլիա ջուր արևելք» Արտաշատի, Արարատի և Մասիսի տեղամասեր	- Խմելու և ոռոգման ջրի, կոյուղու համակարգի խոշոր (մարդկանց և կենդանիների զանգվածային հիվնադացության և հեղեղումներ առաջացնելու սպառնալիք ներկայացնող) վթարների արձանագրման դեպքում: - Խմելու ջրում սանիտարական նորմերին չհամապատասխանող արդյունքների (որոնք կարող են բերել մարդկանց և կենդանիների զանգվածային հիվանդացման) արձանագրման դեպքում:	ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություն ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն	Արձանագրելիս՝ անհապաղ

			ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ «Արարատ» մասնաճյուղը ՀՀ Արարատի մարզպետարանի աշխատակազմի Արարատի մարզի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն	

7/6/2020

X

VERIFIED OCSP 06/07/20 17:34:50 GMT+4

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: MIRZAKHANYAN LILIT 6107860169 Լ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ